

ԳԱՆՁ

ԱՐՀԵՍՏԻՑ

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԳԻՆ 60 ՓԱՐՍ.
ՎԵՐԱՄԱՆԻՆ 30 ՊԱՆ.
ՏԱՐԵԿԱՆ 60 ՊԱՆ.

ԳԱԼԱՌԱՅ ՀԱՄԱՐ
ՍԵՂԻՆԻՆ ԲԻՆԵՆԻՆԻՆ
ԲԱՆԴԻՆ, ԻՍԿ ՃԱՄԲՈՒ
ԺԱՐԻՐԸ ԲԱԺԱՆՈՐ-
ԴԱՅ ՎՐԱՅ Է:

ԾՐԱՆՈՒ ԳՄԱՆ ՍՈՊԸ
40 ՓԱՐԱՅ Է:

ՍՈՂԻՆ ՀԱՐԱԹԱԿԱՆ ՀԱՆ-
ՊԵՐԻՆ ՀԱՄԱՐ ՄԻԱՅԻՆ ԲԸ-
ԺՐՉԿԱԿԱՆ, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ
Ե ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ յՕԳ-
ՈՒԱԺՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ
ՀՆՈՐՀԱԿԱՅԻՆ ԺԵՄԱՐ, ՈՐ
ԿԵՆԵՐ Է ՂՐԿԵԼ ՏՈՔԹ. Կ.
ՃԵՐԱՀԵԱՆ ԱՆՈՒՍԱԺ, Ի
ԹՈՓԻՀԱՆԷԻ ԹՐԱՄԵԼԱՅԻ
ԿԱՅԱՐԱՆԻՆ ՊԻՄԱՅ ԹԻՆ

357

ՏԵՐ ԵՒ ՏԵՆՈՐԵՆ
ՏՕՔԹ Կ ՃԵՐԱՀԵԱՆ
ՊՈՒՄ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ ԳԱՆՁ ՀՐԱԴՐՈՑ

1885 ԱՊՐԵԼ ԹԻՆ 3

ԲԺՇԱՍՏԱՆ

— 0 —

ՀԱՋՈՒԱԳԻՒՑ ԴԵՊՐԻ ՄԸ

ԵՂԵՂԻՔԻՆԸ

ՃԱՆՃԻ ԾԵԾՈՒԿԷ ՅԱՌԱՋ ԵԿՍԾ

—

Կեսարացի Նիքոլի անհե-
նով անձ մը հնակարկատ կօշ-
կակար ՅՅ տարեկան, Պօլսոյ
էտըրնէ դրան մօտ Սալմա-
թօմիուքի թաղը բնակող,
1875 սեպտեմբեր 5 ին ուր.
բաթ օր մը Պէշիքթաշ հի-
ւանդներ գարմանելու յատ-
կացեալ տեղս ներկայանալով
հետեւեալը պատմեց. Ութը
օրէ ի վեր ձախ ականջին մէ-
ջը ձայն մը կ'իմանար՝ որ կար-
ծես թէ փայտի մէջ որդ մը
կը քերէր. իւր պատմածին
նայելով՝ խածնելու ցաւեր որ
երբեմն դադրելով նորէն
կ'սկսէր, անանկ որ ստատկու-
թենէն գետին ճանկելով հա-
զիւ կրնար դիմանալ. ինձ
դիմած ատենէն օր մը առաջ
կ'ըսէ թէ որդի պէս բան մը
եղած է, բայց տեսնելով որ

ցաւին շարունակութիւնը չի
դադրիր, թաղեցւոցմէ քանի
մը անձանց հետ ինձ կը դի-
մէ. և հաճ գտնուող դար-
մանուելու նպատակաւ հա-
ւաքուած ժողովուրդը՝ այս
խեղճ մարդուն աղաղակներէն
ինձ յատկացեալ սենեակը կը
լեցուին ականառես բլլալու.
տաքնապիւր անձին ամփոնջը
քննութեան ենթարկելով աչ-
քով աղէկ մը չի կարողանա-
լով դիտել, հարկադրեցոյ ա-
կանջը լայնցնող գործիքը դը-
նելով յատակ տեսնել որ ա-
րիւնսխառն ցարաւով հեղուկ
մը ծածկած էր.

Մարբելէ և չորցնելէ վեր-
ջը՝ ահաւասիկ գտնուած ձեւը.
տեսակ մը կծիկի պէս բան մը
ականջին խորը լեցուն այնպէս
սեղմուած որ կարծես թէ
երկայն որդ մը կը սողար կապ
կապ եղած, խղելիով (ճըմ-
պըզ) մը բարձրացած մէկ տե-
ղէն բռնեցի, կտոր մը զատ-
ուեցաւ. դուրս ելած մասէն
հասկցայ թէ որդի մը կտոր է.
դարձեալ ուրիշ կտոր մը բըռ-
նելով ամբողջ որդ մը, նորէն

ուրիշ մ'ալ, այսպէս ութը հատ որդի որ գետինը տախտակին վրայ կը սողային, Դարձեալ դապջ ջուրով լուարէս վերջը ականջին խորը ամբողջ վէրքով ծածկուած տեսայ. կասկածելով որ ականջին ներքնասնեկին մէջ ուրիշ ալ չի գտնուի, անոնք եթէ կայ, սատկցնելու և միեւնոյն տեսն վէրքը բուժելու նպատակաւ ջրախառն պարզած շոգի սնդիկի (Սիւպլիմէ քորրողիֆ) մէկ հազարերորդ քանակութեամբ, գրեթէ (չիւրինկայ) ով մը առաւօտուն և երեկոյին վէրքերը թրջելով իբր դարման գործածէ. ութը օր վերջը դարձեալ եկաւ. ականջը քննելով կատարեալ առողջացած գտայ.

Ելած որդերուն երկայնութիւնը տասնեւհինգ հազարերորդամեթրը իսկ լայնութիւնը երեք, ճերմակ գոյն, կակուղ, առանց թելի, գըլանաձեւ, տասնեւմէկ բաժանումով մէջ տեղէն դէպի առաջ երթալով կը բարակնայ սրածայր վերջանալով, և դէպ

ի տես հաստ կտրուածի պէս բերանը ծծիչ մը և երկու կարծր կարթ, որոնցմով կըրնան պատռել և բաժանել.

Կ'երեւի թէ անմաքրուած ենէն քնացած տտեն ականջին մէջ ճանճ մը հաւկիթ ձգած և վերջը որդի փոխուած էր.

Այն որդերը որ մարդու զանազան մասերուն մէջ գլուխուած են, չորս տեսակ ճանճէ յառաջ կուգան. 1. Մսակեր. 2. Կապոյտ. 3. Ուկեղօծ. 4. Մարդակեր.

1. Մսակեր տեսակը գիւրուն վրայ կը ծնի. չորսին ամենէն մեծը և ընդհանրացածը, մարմնոյն առջիւի կողմը ոսկեգոյն դեղին է, բաւական երկայն սեւ և հաստ մազերով ծածկուած, կուրծքը մխրաբոյն և չորս սեւ գիծ երկայնքը դրուած, փորը փայլուն սեւ, չորս ճերմակ քառակուսի ամեն մէկ օղակով վրայ. Այս ճանճը շուտ կը թռի և շարունակ ձայն կը հանէ.

2. Կապոյտը կամ միւրինը ա-

առջին տեղակէն պղտիկ, գը-
լուխը թուխ, դեղնագոյն, ա-
ւելի ձայն հանող, շատ հե-
ռուէն մտին հոտը կ'առնէ,
մանաւանդ թարմ ըլլայ, այս
տեսակը հաւկիթ ձգուելով
յառաջ կուգայ:

3. Ոսկեգօծը տան մէջ գըտ-
նուած ճանճի մեծութեամբ
դիերուն (լէշ) վրայ կ'ածէ:

4. Մարդակերը ինը հազա-
րերորդամեղը, գլուխը
խիստ մեծ, երեսը ոսկեգոյն,
ոտքերը սեւ, թեւերը թա-
փանցիկ է:

— — —

ԱՍՈՐՆՑ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԴՈՒՍ ՎՐԱՅ

—

Ողոր բժիշկները գիտեն
թէ առաջին, երկրորդ և եր-
րորդ տեսակէ որդը կրնայ
ծնիլ և մեծնալ մարդուս վեր-
քերուն և բնական ծակերուն
մէջ, մանաւանդ մաքուր չի
նայուած հիւանդանոցներուն
մէջ:

Մարդուս ստամոքսին և
փսխած մասին մէջ յաճախ կ'ե-
րեւին, աղիքներուն մէջ հազ-
ուագիւտ են:

Էքսի մէջ Ասթրոս բը-
ժիշկը պատմած է թէ կին
մը դաշտի մէջ քնացած ա-
տեն, ճանճերը քիթին մէջ
հաւկիթ ձգած՝ երեք օր խո-
րունկէն թեթեւ ցաւ մը ըզ-
գացած՝ է որ ճակատի և աջ
ականջի ոսկորի մէջ ցնցում
կուտար. վերջը թէ՛ հիւանդը
և թէ մօտը եղողները ձայն մը
կը լսէին, կարծես թէ որդ մը
փայտ կը կրծէ. երկու օր ետ-
քը քիթէն արիւն մը կը հոսէ,
որմէ շատ մը որդեր կ'ելլեն,
(գրուած է թէ հարիւր տասն
երեք հատ էր):

Մեռեալներու ճակատի և
երեսի ոսկորներու զաւիթնե-
րուն մէջ ալ գտնուած են:

Մարդակեր տեսակը կիւյ-
եանի բանտերու մէջ շատ մը
դատապարտեալներուն քիթին
խորը որդ ձգելով մէկ քանիին
քիթը ամբողջ կերուած՝ որ
մահուան պիտոճառ եղած է,
և ոմանց ալ տձեւցուցած է,
ոմանց աչքը և երեսը, կոկոր-
դը և մարմինին ամեն կողմը
փորած է:

Շատ սոսկալի պատմու-

թիւներ, որոնց մէկ քանին հարկ համարեցինք պատմել:

Պարոն Բուլէն 1829 ին կը կը պատմէ թէ, Լինքօլնշիր քաղաքին մէջ մուրացիկ մը տաք Պր մը ծառի մը տակ կը պծուկի, մարմինին և շապիկին մէջ տեղը պահելով իւր ճաշէն աւելցած քիչ մը հացը և միտը որ չուտ մը ճանճի որդով կը ծածկուի և մարմինին մէջ ալ կ'անցնի, քիչ ժամանակէն այնչափ կուտեն որ մահը անպատճառ կ'երեւի. վիրաբոյժ մը կը կանչուի անբուժելի ըլլալը կը հաստատէ. յետոյ կը մեռնի, ահաւել տեսարան, կ'ըսէ մեկնիլը թէ մարմինին ուտուելով խորցած վէրքերուն մէջ խոչոր որդերը կը վխտան եղեր:

Պարոն Ժիւլ Բլոքէ աւելի դիտողութեան արժանի պատմութիւն մը ըրած է ֆարիզի մօտ Մօնֆորթն ըսուած գիւղը. Յիսմէն տարեկան հին ժողուող մը, խոր փոսի մը մէջ գտնուած և Օէն-Լուիի հիւանդանոցը տարուած էր. կը պատմէ թէ գլխուն մա-

զերը բարձրացած էր կլոր ուռերէ անկանոն ծակտիկներով. որոնցմէ հոսած շարաւ կը վազէր և բազմաթիւ ճանճի որդեր կը խաղար. աչքին ուռցած արտեւանունքներէն 15-20 որդեր կ'ելլէր կը մտնէր, մինչև որ աչքին գմբթը կերան. ուրիշ որդեր, քիթէն և ախտիցէն կ'ելլէին. սրբանէն ալ նմանապէս. այս թշուառը Յոբի հիւանդութեան սոսկումը կը ներկայացնէ. պատմիչը այնպէս կը նկարագրէ թէ այսպէս սոսկալի և զգուելի ներկայացում մը չէր տեսած որ ողջ ըլլալով որդերը կուտէին:

Վերոյիշեալ պատմութիւնը կ'ասկած չի թողուր ինչ որ Ալիսթարք մեզ կը սորվեցնէ թէ մեծ պատմոյ արժանի եղողները՝ Պարսից թագաւորներուն հրամանաւ ճանճի որդէ ողջ ուտուեցու կը դատապարտուին եղեր. պատժաւ պարտք մէկըմէկու դարձած Ժիւլիան մեծութեամբ երկու նաւակներուն մէջ տեղը գրուելով գլուխին, ձեռ-

ուրնին և ոտուրնին դուրս ձգ-
գելով, երեսնին արեւին և
մեզը քսուած, ճանճերէն
ձգուած որդերը դժբաղդեն-
քուն միւր մտնալով . . .

Միհրդատ ալն ատենուան
Պոնտոսի թագաւորը, երկայ-
նաբազուկ Արտաշէսի ձեռամբ
այս ահռելի տանջանքին դժ-
ուած, եօթնամասուն օրէն
անտանելի ցաւօք մեռած՝ երբ
վրայի նաւակը վերցուցեր են
մօրժինը և աղիքները բիւրա-
ւոր որդերէ կերուած է ն-
դեր :

Հետեւեալ տեղեկութիւն
ները գիտնալով պիտի զգու-
շանանք ճանճերէ որ կրնա-
լէ թէ միայն հաւկիթ ձգել
այլ և թոյն մը մէկ կողմէն
ուրիշ տեղ մը փոխադրել,
որուն վրայ ուրիշ յօդուածով
մը պիտի խօսինք :

Բարեբախտաբար միշտ այս
սոսկալի գէպերը չեն պա-
տահիր և թեթեւ կերպով ե-
ղածները կը բժշկուին, իմ
հանդիպած գէպքիս նման :

Սովորաբար ապրող կենդա-
նիք իրենց կերած անհատները

չեն մեռցուներ հազուագիւտ
կերպերէն ի զատ, եթէ այն-
պէս չըլլար ուտող կամ ուտ-
ողը կ'անյայտանային, որ բը-
նական օրինաց հակառակ է :

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆԻԹԵՐ

— 0 —
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ ՄԸ

—
Նախ սկսինք զանազան տե-
սակ հօւնտերէ :

Ատաղձագործին պէտք է
փայտէ քառակուսի չրջանակ
մը շինել տալ, որ բաժնուած
ըլլայ խել մը խորշերու : Այս
չրջանակին մէկգլին կը գոցես
ապակիով մը : ապա բոլոր
խորշերը կը լեցնես կիսովին՝
զանազան տեսակ հունտերով.
մնացեալ կէսն ալ կը լեցնես
սեւ բամբակով և վրայէն տախ-
տակ մը կը դաւես : Այն ա-
տեն, երբ չրջանակը դարձը-

նես, բոլոր խորշերու մէջի հունտերն կը տեսնուին: Ու շաղրութիւն ընելու է որ ապակին աղէկ մը փակած ըլլայ խորշերուն:

Խոտերու հաւաքածոյ մը շինելու համար զանազան ձեւեր կան, Տերեւներ ժողուելու համար մէն մի ծառէն երկու տերեւ առնելու է և երկու թերթ գորշագոյն թղթի մէջ դնելով՝ 12 ժամ մամուլի տակ ձգելու է: Ապա կտոր մը խէժով փակցնելու է զանոնք ճերմակ թղթի վրայ, մին ուղիղ և միւսն հակառակ կողմը, ու անոնք տակը գրելու է: Տունկերն ու ծաղիկներն ալ այսպէս կը չորցնեն, բայց չեն փակցներ, այլ գնդասեղով մը կամ թղթի կտորներով բռնել կուտան դանսնք:

Ծաղիկները չորցնելու ուրիշ միջոց մ'ալ կայ, որով նոցա ձեւն ալ կը պահուի:

Պէտք է ունենալ քառակուսի տուփ մը՝ մաղուած և արեւու մէջ աղէկ մը չորցած բարակ աւաղով լեցուն: Ծաղկոնց ցօղուններն կտրելով՝ ա-

ւաղին մէջ տեղաւորելու է: Յետոյ մաղով մը աւաղ ցանելու է նոցա վրայ, մինչեւ որ չի տեսնուին, բայց չատալ լեցնելու չէ: Ետքը տուփը վեց ժամու չափ արեւուն մէջ ձգելու է: Վեց ժամէն ետքը ծաղիկներն սունելով՝ դնելու է մաղին մէջ և կամաց կամաց երերցնելով՝ աւաղը թօթաւելու է: Այն տեն ծաղիկներն կը մնան կատարելապէս չորցած և իրենց ձեւն ու գոյնը պահած:

— 0 —

ՆԵՐՔԻՆ ՆԵՐԿԵՐ.

ՈՂՈՂԵՍԱԼ ԿՈՄ ԳԷՇ ՕԳՈՎ
ԺԱՆՏԱՀՈՏԵՍԱԼ ՏԱՆ ՄԸ ՄԷՋ
ՀԱՐԿ ԵՂԱԾ ՄԱՔՐՈՒԹԻՒՆՔ

—

Նորուղիներու, գաւիթներու և ներսի կողմին համար գործածուած սպիտակ ներկն, որ կարմէլեանց Սպիտակ կը կոչուի, կը շինուի խիստ սպիտակ կիրէ: Այդ կիրը մարելէ և չատ բարակ

մաղէ մը անցունելէ վերջը, կաթի թանձրութեամբ կը գործածեն զայն և 5-6 անգամ իրարու վրայ կը քսեն. բայց մէն մի անգամուն պէտք է որ ներկն աղէկ մը չորնայ և խողանակով շփելու է, որպէս զի աւելի փայլուն և աւելի դիմացկուն ըլլայ:

Երբ այս սպիտակ ներկն քսուի քարի կամ չոր գածի վրայ, բնաւ չի գեղնիր. եթէ կ'ուզես աղէկ մը փայլեցնել զայն, պէտք է փորագի (եապան տօմուզու) խողանակով մը շփել, և կամ ձեռքին ափովն՝ եթէ աղէկ մը չորցած է:

Այս ներկն աւելի գեղեցիկ կ'ըլլայ, երբ կիրը դրնենք մաքուր աղբիւրի ջրով լեցուած և ծորակ մ'ունեցող աւազանի մը մէջ. կիրը ջրին հետ աղէկ մը խառնելէ ետքը՝ 24 ժամ ձգելու է. ապա ծորակը բանալու է, որպէս զի ջուրը վաղէ՛ վերջէն նորէն ջուր դնելու և նոյնպէս շարունակելու է ամիս մը. կիրը որքան շատ լուացուի,

այնքան գեղեցիկ կ'ըլլայ. երբ պէտք ըլլայ գործածել զայն. ծորակը բանալով՝ ջուրը պարպելու է, և այն տեսն կիրը միայն կը մնայ զանգուած մը ձեւացուցած. Պէտք եղածին չափ առնելով դնելու է հողէ ամանի մը մէջ և լեցնելու է վրան քիչ մը վննետիկեան թէրէպանթին և քիչ մ'ալ հեղուկ լազուարթ (լաճիվէրթ) կամ կապոյտ մոխիր. խոշոր վրձինով մը այս նիւթերն աղէկ մը խառնելու է. եթէ խառնուողն շատ թանձրանայ, պէտք է վրան քիչ մը աճառի ջուր լեցնել ու խառնել ուժով, ապա քսելու է պատին վրայ, երկրորդ անգամ քսելուն՝ պէտք է որ առաջինն աղէկ մը չորցած ըլլայ:

Ստեւաւոր սպիտակն, որով ձեղուններն կը շինեն առանց գածի, սապէս կը շինուի:

Ձեղունին վրայ 3-4 գիծ հաստութեամբ կը քսեն սպիտակ և պարարտ հող մը, որուն հետ խառնելու է իւր մէկ

որորորդին չափ կենդանի կիր
և նոյնքան ալ խաղախորդի
(տէպպադ) գորշ ստեւ : Ասոր
վրայէն քսելու է ուրիշ նիւթ
մը , որ կը բաղկանայ 3 մաս
լաւ ծեծուած ստեւէ ու նոյն-
քան ալ նոր մարած կիրէ :

Այս տեսակ ներկերու ա-
մենէն աժան միջոցն սա է :

Առէք՝

Սերը առնուած կաթ՝ 186
հարիւրորդալիտր :

Նոր մարած կիր՝ վեց ունկի :

Ծեխակի , վուչի կամ ըն-
կուղի իւղ՝ չորս ունկի :

Սպանիոյ սպիտակ՝ մէկ
լիդրա :

Կիրը ջուրի մէջ խոթելով
մարելու է . ապա գուրս հա-
նելով՝ բացօդեայ ձգելու է .
որով կը փոշիանայ . այս կիրը
դնելու է կաւէ ամանի մը
մէջ , վրան լեցունելու է մաս
մը կաթ , ախչափ որ յստակ
հեղուկ մը ձեւացնէ . ապա
քիչ քիչ լեցնելու է նաեւ իւ-
ղը , հեղուկն կամաց կամաց
չարժելու . յետոյ լեցունելու
է նաեւ կաթին մնացորդն և
վերջապէս Սպանիոյ սպիտակն :

Երեք իւղերէն որը որ ըն-
լայ՝ հոգ չէ . միայն թէ սպի-
տակ ներկելու համար մեխա-
կի իւղը նախընտրելի է , ո-
րովհետեւ գոյն չուերի . ամե-
նէն ստորին իւղերն ալ կրնան
գործածուիլ ուրիշ գոյներու
համար : Իւղը , երբ կաթի ու
կիրի խառնուրդին մէջ լեց-
ուի , կ'աներեւութանայ . կի-
րը բոլորովին կը լուծէ զայն :

Սպանիոյ սպիտակն փրշ-
րելու և կամաց մը ցանելու է
հեղուկին երեսը . քիչ քիչ հե-
ղուկին կը խառնուի , այն ա-
տեն գաւազանով մը խառնե-
լու է . այս հեղուկին զանա-
զան գոյներ կրնան տրուիլ
այլ և այլ ներկերով :

Ներկելու այս եղանակն ,
որ միւսներէն շատ աւելի ա-
ժան է , ոչ կրակ կը պահան-
ջէ և ոչ երկար ժամանակ .
տասը վայրկեանի մէջ կրնայ
պատրաստուիլ , մանաւանդ
թէ ժամէ մը կատարելապէս
կը չորնայ և ամենէն ալ դի-
մացկուն է : Արդէն ներկուած
տեղերուն վրայ անդամ՝ մը
միայն քսելը բաւական է :

իսկ նոր փայտի վրայ երկու անգամ քսելու է :

—

Փորձառութիւնը կը հաստատէ թէ , երբ սենեկի մը մէջ թոքախտաւոր մը մեռնի , պէտք է ոչ թէ միայն բոլոր զգեստներն ու կարասիներն տարել , այլ և պատերուն ու տախտակամածներուն երեսի խաւն հանել , որպէս զի փոխանցելութեան (պուլաշքլըք) վտանգ չի մնայ , Հետեւեալ դէպքը կ'ապացուցանէ թէ պատ մը ո՛րչափ ժամանակ կրնայ պահել հոտ մը , Գաղիական յեղափոխութենէն շատ տարի առաջ , Մալէրպ պաշտօնեայն Վէնսանի բանտերը բանալ տուաւ :

Շատ մը հետաքրքիրներ վազեցին այն բերդը , մանաւանդ այն անձինք , որք առնելով բնական էին այն բանտին մէջ , փափաքեցան նորէն տեսնել զայն , և դոտան հոն այն հոտը , զոր առած էին առաջին անգամ մօտեկնուն . սակայն դռներն ու պատուհանները բացուած էին

և օդը ազատ կը մօտէր կ'ելլէր :

Պ. Կիւյթօն-Մօրփօ յաջողած է ո՛ր և է տարափոխիկ ախտ պարունակող օգերը մաքրել թթուածնաւոր քլորալրական թթուով (առիտ քլորիտիկ օկզիմէնէ) : Այս թրթուն վտանգաւոր օգերն կը մաքրէ և նոցա մէջ գտնուած ժանտահոտութիւններն կը չնջէ :

Բայց այս միջոցն , որ կը յաղթէ օգին ապականութեանն , կարելի է նոյնքան զօրաւորապէս չի ներդարծէ պատերու վրայ , եւր այդ ժանտահոտութիւնք քորերուն ծակերուն մէջ անցած ըլլան . արդ , կիրը այս գոլծը կը տեսնէ . պէտք է պատերը քերել և ապա վրան հեղուկ կիր քսել :

Խնաւ և ցուրտ եղանակն ամենեւին օգտակար չէ կենդանական կազմութեան . ուրեմն երբ տուն մը ջուր կոխէ , անոր խոնաութիւնն ու պաղը ո՛րքան վտանգաւոր կ'ըլլան , մանաւանդ երբ բնակիչք ստիպուին դիշերներ ու

ցերեկներ անցնել այն տունին մէջ ,

Նախ և առաջ պէտք է բնակարանն լուալ , վասն զի այս է զայն չորցնելու միջոցը : Յիանարիոյ , Հոլանտայի , Անկլիոյ , վերջապէս բոլոր այն երկիրներուն մէջ , որոց հողն կամ մթնոլորտն խոնաւ են , լուալով միայն կը յաջողին բնակարաններու խոնաւութիւնն քիչցնել :

Ջուրերը , երբ երկարատեւն մնան , շուտով կ'ապականին և քիչասակար գոյորչիներ կ'արձկեն . օդն ու կրակը չեն կրնար կատարելապէս չորցնել զայն . եթէ օդը չոր ըլլայ՝ մասամբ կը չորնայ , բայց օդը զովացածին պէս , մանաւանդ գիշերները , նորէն կը խոնաւնայ :

Ուրեմն պէտք է պատերն ու տախտակամածները լուալ , որով կը մնայ միայն մաքուր ջուր , որ դիւրաւ կը չորգիանայ օդի , մանաւանդ կրակի միջոցաւ :

Բնակարանը աղէկ մը լըլացուելէ ետքը , պէտք է

օդաւետել զայն . ուստի ցերեկը դռներն ու պատուհանները բաց ձգելու է , որպէս զի օդի հոսանք մը ձեւանայ : Եթէ օդը չոր է , դիւրաւ կը չորնայ . բայց միշտ դռներն ու պատուհանները բանալու է , վասն զի դրսի օդը , եթէ խոնաւ ալ ըլլայ , դարձեալ ներսի օդէն աւելի չոր է :

Արեւը մարը մանելու միջոցին՝ դռներն ու պատուհանները դոցելու է , կրակ վառելու է և մինչեւ կէս գիշեր մարելու չէ :

Կրակը սենեկին խոնաւութիւնը կը նուազեցնէ :

Թրջած կարասիները չարելու է ամբողջ կրակին մօտ , մօնաւանդ զանոնք , զորս անկարելի է լուալ :

Առաւօտուն , չի հագուած , պէտք է զգեստները չորցնեն , որպէս զի գիշերուան խոնաւութիւնն անհետանայ :

Բնակարանին պատերը մաքրելու է կիրով , վասն զի կիրը ժանտահոտութիւնները ջնջելու ամենէն հզօր և ամենէն արագ միջոցն է :

Ուստի 3-4 լիպրա կեն-
դանի կիր հալեցնելու է 744
հարիւրորդալիար ջրի մէջ և
անով ճերմկցնելու է առաս-
տաղը, պատերն ու տախտա-
կամածը:

ԱՐՀԵՍՏԻՅԱՆ

ԿԱՊՈՅՑ ԳՈՅՆԵՐ ՇԻՆԵԼՈՒՆ
ԿԵՐՊԸ

(Շար. նախորդ թիւէն)

Գաղիոյ ատենակալ Կոմս
Շարթալ՝ ընկերութեան նա-
խագահը՝ մրցանակն Պ. Կիմէի
յանձնելով՝ կը յարէ թէ Պ
Հօրաս վէրնէ Ֆօնթընօի պա-
տերազմը, ներկայացնող մե-
ծատարած պատկերին մէջ՝
մասնաւորապէս կը գործածէ
Պ. Կիմէի հնարած երկնագոյն
կապոյտը՝ որուն յատկու-
թիւնը կը դերապանցէ Լազ-
ուարթ քարէն շինուող կա-
պոյտին ունեցած յատկու-
թիւնը: Բացառութիւն Կոմս Շար-

թալ կը դիտէ թէ՛ նոր շին-
ուած երկնագոյն կապոյտին
30 կրամը 25 ֆունքի կը ծախ-
ուի, թէեւ շատ տեսակ
գոյնզգոյն օրինակներ կուտայ,
մինչդեռ սովորական ծովա-
գոյն կապոյտին ազնիւ տե-
սակին 30 կրամը առնուազն
80-100 ֆր. կ'արժէ:

Պ. Կիմէի եղանակը տա-
կաւին գաղանիք մ'ըլլալով՝
Պ. Կմըլէն, քիմիագիտութեան
դասատու ի Թիւպէնի, հրա-
տարակեց հետեւեալ նախա-
գիծը բազմամասն երկնագոյն
կապոյտը կազմելու համար:
Եւ հակառակ բարեփոխու-
թեանց՝ որոյ ենթակայ ըլլալ
կը թուի սոյն անկատար նա-
խագիծը, կը գնենք հոս զայն
ընագրապէս առնելով քիմիա-
գիտութեան և ընագիտու-
թեան արձանագրութենէն,
որպէս զի օգուտ մ'ըլլայ ըն-
թերցողին կեղծ կապոյտը
ճշմարտէն որոշելու:

Զեռք կը բերուին կոպճա-
կաւոր յրածինն և պաղլեղն
այսպէս. առաջինը՝ հալեցնե-
լով փոշիացած վանաքարին

ամբողջին՝ տնկաղի ածխածրթ-
ուառին քառապատիկ մասով
ջուրին մէջ լուծելով հալածը ,
և ջրաբլթրական թթուածինով
անոր մօտը իջեցնելով . երկ-
րորդը՝ ամոնիաքով զուտ պաղ-
լեղի լուծում մը ջուրին յա-
տակը իջեցնելով : Այս երկու
հողանիւթները պէտք է ա-
ղէկ մը լուացուին տաք ջրով .
Յետոյ այս երկու ջրածիննե-
րուն չոր հողի քանակութիւ-
նը պէտք է սահմանել , խո-
նու մբուրներէն մէկ քիչ
տաքցնելով : Ետքը այրող
աւշնանի լուծման մէջ տաքէն
կը լուծուի , տինքան կոպճա-
կաւ որքան որ պէտք ըլլայ :
Այսպէս կը սահմանուի լուծ-
եալ հողին քանակութիւնը :
Այն ատեն առնելու է այս
վերջինէն 22 մասի վրայ , չափ
մ'ալ պաղլեղաւոր ջրածին որ
կը պարունակէ 70 մաս չոր
պաղլեղ գոր աւելցնելով կոպ-
ճակաւին լուծման վրայ չո-
ղիացնելու է բոլորը մէ-
կէն՝ երկրորդնով շարունակ
մինչեւ որ խոնաւ փշի մը
մնայ :

Վրան աղէկ մը դոց հա-
լոցին մէջ դնելու է երկու
մաս ծծումբ և մէկ մաս (ա-
նիաքը) աւշնային ածխածրթ-
ուառ . այս խառնուրդը տաք-
ցնելու է քիչ քիչ մինչեւ որ
միջին ջերմութեամբ հալի ,
այն ատեն այս խառնուրդը
նետելու է փոքրիկ քանակ-
ներով հալած նիւթին մէջ .
ջուրին շագիններուն եռալը
դադրելուն պէս՝ նորէն մաս
մ'ալ աւելցնելու է : Ժամ մը
հալոցը չափաւոր կրակին ըռ-
նելով՝ վրայէն հանելու և
պաղեցնելու է : Կը պարու-
նակէ հիմայ չափէն աւելի
ծծումբով խառն ծովակապոյտ
նիւթ : առաջինը կը գատուի
ջրով : Եթէ չափէն աւելի է
ծծումբը , չափաւոր տաքու-
թեամբ կը փարատի : Եթէ
պատահի որ ծովագոյն կա-
պոյտին ամեն մասերն ալ հա-
ւաստրապէս մոխիր դարձած
չըլլան « քաղիւնէ » ամեն գե-
ղեցիկ մասերը կրնան զատ-
ուիլ ջրոյ լուացմամբ նրբա-
գոյն փոշիի վերածուելէն
ետքը :

«Ջառիկոդոյն կապոյտ» .
 — Սոյն գոյնը գոր նկարիչք
 Պ. Թէնար քիմիագէտին կը
 պարտին , և վաճառականու-
 թեան մէջ անուն առած է ,
 զառիկեայ կրկին - փոսփո-
 րաթթուատ կոչուեցաւ որ
 կը բաղկանայ փոսփորական
 ածխայինէ , և նոյնահիմն՝ չա-
 փազանց զառկաքարէ «զըր-
 նըթաշը» այսինքն այն ազն-
 որ կազմուած է տարբազա-
 դրութեամբ զառիկային բու-
 րակաթթուին «բաղադրու-
 թիւն բորակածին ածխայինի,
 և զառիկի , և աւշնանի փոս-
 փորատի միջոցաւ «բաղադրու-
 թիւն փոսփորական ածխայի-
 նի և աւշնանի» . այս ազն կամ
 զառիկի փոսփորատը՝ պող-
 լեղով կիր եղած՝ կուտայ բա-
 ւական զեղեցիկ կապոյտ մի
 որ երկնագոյն կապուտակին
 անդը կը բռնէ , և այսօր բազ-
 մաթիւ պտրադայնեբու և
 փափկագոյն նկարներուն մէջ
 կը գործածեն . վառն զի երկ-
 նագոյն կապոյտին հետ հա-
 մեմատելով գինը չտիւաւոր է,
 սակայն , Պ. Պուրժուա , «Թը-

րէթէ սիւրջար տէ բէնդրին
 մէջ կը ցուցնէ անոր մէկ պա-
 կասութիւնը , որ է գիշեր
 ժամանակ ճրագի լուսով մա-
 նիշակի խառն գոյնի մը փոխ-
 ուիլը . այս այն անպատեհու-
 թիւնն է որ հարկաւ կը փո-
 խէ նոյն ատեն՝ արհեստաւո-
 րին բացատրել զւղած կեր-
 պերուն պատշաճ համեմա-
 տութիւնը .

Ջառիկը իւր կապոյտ գոյ-
 նին խառնութիւնը օդին հար-
 ուածէն կ'ստանայ , պարո-
 նայք Պուրժուա և Գօլքմուդ
 կարող եղան այնքան թանձ-
 րացնել զայն որ կարենայ դիւ-
 րաւ գործածուիլ . և եթէ
 երկնագոյն կապոյտին չափ
 նուրբ երանգներ չունի բնա-
 պէս , կրնայ պէս պէս խառն
 գոյնեբառնուլ արծաթագոյն
 ճերմակին հետ խառնուելով
 բայց պէտք չէ մոռնալ որ
 զառիկէն շինուած կերպա-
 կերպ գոյնեբը քիչ մը սաստիկ
 կ'ըլլան երկարատեւն օդին դէմ
 դրուելով . և վերջէն թեթեւ
 կանաչի կը դառնայ , մինչդեռ
 երկնագոյն կապուտինը այս-

պէս չէ, այսինքն չեն այլայլիր:

Ջառիկի կապոյտն հետեւե-
ծալ կերպով կը պարաստուի
ըստ Պ. Թէնտրի:

Տաքութեան միջոցաւ՝ Թիւ-
նապէրկին զառիկի հանքը այ-
րելու է տկար բորակային չա-
փէն տւելի թթուածինով:
լուծումը չոգիացնելու է Բօր-
սըլէն կամ աւելի ազէկ՝ Լըս-
նոսկիէ շրջաթինն ամանի մէջ,
մինչեւ որ գրեթէ չոր ցամաք
ըլլայ միւրը ջրով տաքցնե-
լու և հեղուկը քամացէ անցը-
նելու է՝ երկաթէ զառիկի
« բաղադրութիւն » զառիկի
թթուածինի և երկաթի» քա-
նտկութիւն մը անկէ բաժնե-
լու համար, որ տակը կ'իջնէ:
Այն ատեն վրան թափելու է
աւշնառի կրկին փոսփորաթը-
թու « բաղադրութիւն փոս-
փորական թթուածինի և նոյ-
նահիմն առաւելաչափ աւշնա-
նի» և յառաջ կուգայ, զա-
ռիկի կրկին-փոսփորատ մա-
նիշագոյն միւրը մը, որ ջու-
րի մէջ քանի մնայ վարդա-
գոյն ըլլալու ենթակայ է:

Այս միւրը լուացուելով՝

քամոցին վրայէն ժողուելու է
և տակաւին դոնդող եղած
« քէլթէլէնմիշ » մաս մ'առնե-
լու է և շատ քը 8 մաս ջրա-
ծին պաղլեղով կամ ասոր բան-
դակ « մուրապպա » խառնելու
է. յայտնի է թէ խառնուրդը
ազէկ շինուած կ'ըլլայ եթէ
նոյնպէս գունաւորուած ըլ-
լայ կամ դիֆֆիքն աչքին՝ ա-
ռանձին փոսփորատի մանր
կէտեր չ'երեւին: Այս վիճա-
կին մէջ հնոցին կամ կրակա-
բանի վրայ չորցունելու է
խառնուրդը և երբոր կ'ա-
րուելու չափ չորցած ըլլայ՝ սո-
վորական հողէ հալոցի մէջ
մոթիր դարձունելու է:

Այս բանին համար հալոցը
նիւթով լեցունելով՝ կափա-
րիչով գոցելու և քիչ քիչ տաք-
ցընելու է մինչեւ որ կեռա-
սագոյն կարմրութիւն ունե-
նայ, և կէս ժամու չափ այս
ատտիճան տաքութեան դէմ
դնելէ ետքը՝ հալոցը հանե-
լով մէջէն դեղազոյն կապոյտ
մը կը գտնես, զոր սրուակի
մէջ պահելու է:

« Գործողութիւնն պաղլեղը

պատրաստելու համար ապահովապէս կը յաջողի», եթէ զգուշութեամբ գործածուի բաւական առաւելչափ ամօնիաք և լուսցուի բազում անգամ մաքրագոյն այսինքն ծուխէ զտուող ջրերով:

Զառիկի կապոյտին սոյն նախապատրաստութեան մէջ՝ զառիկային փոսփորատի տեղ՝ զառիկային «արսէնիաթ» կը բռնայ առնուիլ «արսէնեան թթուածինին բաղադրութիւն զառիկի հետ»։ Սիայն մաս մը արսէնիաթ գործածելու տեղ՝ կամ զառիկային կրկին-փոսփորատի մանրչագոյն մրուր, ութ մաս բանդակեղէն պաղլեղով՝ ինչպէս վերը յիշուած է, կէս մաս միայն անկէ գործածելու է։ Դարձեալ ձեռք կը բերուի սոյն աղը փոսփորատին պէս, այսինքն՝ զառիկին վերոյիշեալ կերպով պատրաստուած լուծմանը մէջ, տնկաղի արսէնիաթի լուծում թափելով:

Զառիկի կապոյտը պատրաստելու համար պիտանի եղած մածուածուտ քրէլթէ-

լէնմիշ» պաղլեղը ուրիշ մի քանի գոյներ ալ կազմելու յարմար գալով, հարկ է մանրամասնութեան մտնել այս մասին:

Պաղլիղ լուծելու է այնչափ մը որ «տնկաղի հիարօսիանաթը չկապուեցնէ անոր լուծումը», այս լուծման համար հարկաւոր եղող քանակութեան գոնէ եռապատիկ տաք ջուրին մէջ, և սաստիկ երերցնելով՝ առաւելչափ ամօնիաքով յատակը իջեցնելու է անոր մրուրը: Քիչ մը ատեն այսպէս մնալէն ետքը՝ իւր խողովակի մէջէն ուրիշ ամանի մէջ վաթելու է և առատօրէն լուանալով նորէն փխանցնելու է ուրիշ աման, և կրկնապատկելով լուսցմունքը՝ վերջը քամացին վերայի մրուրը կը զտեն: Այսպէս բանդակ պաղլեղը «չապ մուրապատը» կը պատրաստուի:

(Շարունակելի)

Ա. Զ. Դ.

ԴԵՂԱՐԱՆ Ա. ԳՕԻՈՒՆԱՆ

Պատիւ ունիմ ծանուցանել յարդոյ հասարակութեան թէ այժմ մեր դեղարանը Թօրհանէի թրամվայի կայարանին դիմացը 359 թիւ խանութը փոխադրած ենք, ուր ամեն տեսակ քիմիական ընտիր դեղեր մեծ խնամով և խիստ աժան գնով կը պատրաստուին, և եղանակին յարմար նորովեկիւր ձկան անարատ իւղ աժան գնով կը ծախուին:

Նաեւս Մեծ. Տօբթօր Ճէրահեան էֆէնտի բարեհաճած է շաբաթը երեք օր այցելել մեր դեղարանը, երեքշաբթի հինգշաբթի և շաբաթ օրերը յժամը 6—8 ձրի և 8 էն մինչեւ 11 վճարմամբ դարմանել. աղքատները ամենուրեք ձրիաքար կը դարմանուին:

ԽԷԱՆ

ՊՕՂԱՍ ԲԻՐԷՃՃԵԱՆ

Թօրհանէ ճատտէսինտէ 409 նիճմէրօլու տիւքքեանտա հէր նէվի տէմիր ալէաթլարը, վէ պինա իչիւն լազըմ օլան տէմիրէ այիտ թազըմյարը եաւմագտա տըր, վէ հէր պոյ դացալար աշաղըտան կէլէնլէրտէն տահա միւհքէմ վէ ֆիյաթլարը տա էհվէն օլարագ վէ գուսուրսըզ օլաճաղընը տախի թէահիւտ իտէր:

ն
-
-
տ
-
ճ
-
ն
ք

ա
ն
յ
-
նք

ՏՕՒԹՈՐ Կ՝ ՃԼՌԱՀԵԱՆ
Նախկին աշակերտ Պօլոյ
Արքունի բժշկական դպրոցի 1866

Աշակերտ փարիզու բժշկական Համալսարանի 1837 — 1873

Փոխ բժիշկ փարիզու պաշարման մէջ 1870

Նախկին բժիշկ Սէլիմիէ զօրանոցին 1877

Վ

Սէրասկէրի հիւանդանոցին 1879

Կիւմիւշ սուրի հիւանդանոցին 1880

Պէյլէրպէյի հիւանդանոցին 1881

Սյժմ բժիշկ Արքունի թնդանօթարանի 1882 — 1885

ԳԱՆՁ

ԱՐՀԵՍՏԻՑ

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԴԻՆ 60 ՓԱՐԱ.
ՎԵՐԱՆԵՐԱՆ 30 ՊԱՆ.
ՏԱՐԵԿԱՆ 60 ՊԱՆ.

ԴԱԼԱՈՒԱՅ ՀԱՄԱՐ
ԱՅ ԳԻՆԻ ՄԻՆԵՆՈՅՆԸ
ԲԱՆՈՒՄ, ԻՍԿ ՀԱՄԱՐՈՒ
ԺԱԽՐԸ ԲԱԺԱՆՈՐ-

ՊԱՅ ՎՐԱՅ Է:
ԾԱՆՈՒԳՄԱՆ ՄՈՂԸ
40 ՓԱՐԱՅ Է:


ՍՈՒՆ ՀԱՐԱԹԱԿԱՆ ՀԱՆ-
ԳԷՍԻՆ ՀԱՄԱՐ ՄԻԱՅՆ ԲԸ-
ԺՐՇԿԱԿԱՆ, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ
Ե ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ յՈԳ-
ՈՒԱԺՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ
ՀՆՈՐՀԱԿԱՅԻՆ ԵՄԵՐ, ՈՐ
ԱԿՄԵ Է ՂՐԿԵԼ ՏՊԵԼ. Կ.
ՃԷՐԱՏԱՆ ԱՆՈՒՄԸ,
ԹՈՓԻՀԱՆԷԻ ԹՐԱՄԿԱՅԻ
ԿԱՅԻՐԱՆԻՆ ԴԻՄԱՅ ԹԻՒ

357

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԼՆ
ՏՕՔԺ. Կ. ՃԵՐԱՏԱՆ
ՊՈԼԻՍ

ՏՊԵՐՈՒԹԻՒՆ ԴԱՆՁ ԼՐԱԴՐՈՑ

1885 Ապրիլ ԹԻՒ 2



ՏՕՒԹՈՐ Կ ՃԼՐԱՀԱՆ
Նախկին աշակերտ Պօլոյ
Արքունի բժշկական դպրոցի 1866

Աշակերտ փարիզու բժշկական Համալսարանի 1867—18

Փոխ բժիշկ փարիզու պաշարման մէջ 1870

Նախկին բժիշկ Սէլիմէ զօրանոցին 1877

Սէրասկէրի հիւանդանոցին 1879

Կիւմիւշ սուի հիւանդանոցին 1880

Պէյլէրպէյի հիւանդանոցին 1881

Այժմ բժիշկ Արքունի թնդ անօթ արտնի 1882—188